ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 484 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի N 157-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02570903) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2025 թվականի մարտի 4-ի «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի Սվարանց գյուղի զարգացում» ծրագրի մասին» N 157-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արտ կոնստրակտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09202127) 2025 թվականի հունիսի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կառուցվող 20 բնակելի տների հարակից տարածքների բարեկարգման շինարարական աշխատանք-ների իրականացում՝ 13,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ստրոյ Պրոյեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01063889) 2025 թվականի ապրիլի 7-ին կնքված՝ N 01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թվով 5 բնակելի

տների կառուցման և հարակից տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 99,980,740 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Սլավ Սուր Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01060779) 2025 թվականի ապրիլի 7-ին կնքված՝ N 02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թվով 5 բնակելի տների կառուցման աշխատանքների իրականացում՝ 94,996,710 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

29.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ